



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
«ՀՐԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ԺՊ»

Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«23» 04 2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 40

Ձեռնարկողը՝

<<Հայգյուղշիննախագիծ ինստիտուտ>> ՍՊԸ
Ք. Երևան, Կիևյան 16

Գործունեությունը՝

**<<Շիրակ-Ջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ի սպասարկման
տարածքում գտնվող ջրամատակարարման և ջրահեռացման
համակարգերի վերականգնման աշխատանքների շրջակա
միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

**<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի
տնօրեն՝**



Վ. Սահակյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԸՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԸՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 40

«23» 04 2018թ.

<<Շիրակ-Ջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Պատվիրատու՝	<<Հայգյուղշիննախագիծ ինստիտուտ>> ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության Նախնական գնահատման հայտ և կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	«Գ»
Տեղադրման վայրը՝	ՀՀ Շիրակի մարզ

Ծրագիրն ընդգրկում է ջրամատակարարման ցանցի վերակառուցում, նորացում ու ընդլայնում, ինչպես նաև կոյուղու համակարգին առնչվող որոշ հրատապ միջոցառումներ Շիրակ Ջրմուղ-կոյուղու սպասարկման տարածքում: Նախատեսվող աշխատանքներն իրականացվում են հաշվի առնելով 2009-2014թթ. ընթացքում իրականացված ծրագրի նախորդ 1 և 2 փուլերի աշխատանքները, դրանց ավարտից հետո շահագործման փորձը և հետագա ուսումնասիրությունները: <<Շիրակ-Ջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ն ներկայումս չի գործում, վերնագրում ներառվածը պայմանագրի անվանումն է: Այդ տարածքների սպասարկումն իրականացվում է <<Վիոլա Ջուր>> ընկերությունը:

Ծրագիրն ընդգրկում է Գյումրի քաղաքի տարածքը և նպատակ ունի ապահովել շարունակական, շուրջօրյա, ապահով և հիգիենիկ ջրամատակարարում՝ դրանով բարձրացնելով տվյալ տարածքում բնակչության կենսական և առողջական պայմանները: Ծրագրի նպատակն է ջրամատակարարման որակական և քանակական բարելավումը տարածաշրջանի բնակչության համար:

Որպես ծրագրի Փուլ 3-ի առաջնահերթ աշխատանք նախատեսվում է փոխել ցանցի Փուլ 1 և Փուլ 2-ի ընթացքում «բաց թողնված» այն տարածքները, որտեղ հին բաշիչ ցանցը չի փոխվել:

Սույն ծրագրի շրջանակներում Գյումրի քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի բարելավմանն ուղղված աշխատանքներն ամփոփ տեսքով ներառում են քաղաքի հետևյալ տարածքները.

- Անի թաղամաս,
- Գոտի 1-ի բոլոր տարածքները,
- Գոտի 2-ի արևմտյան հատվածը,
- Գոտի 2 Ձորի թաղամասի տարածք (արևմտյան կողմ),
- Գոտի 3.1 մարզադաշտի տարածք,



- 3ա/3բ և 4ա/4բ ջրամբարների/ճնշումային աշտարակների մուտքային և ելքային խողովակների չափերի մեծացում,
- Գյումրիի հարակից մի քանի տարածքներում կոյուղագծերի փոխարինում,
- Գյումրու հարավային և արևելյան բոլոր տարածքները (Գոտի 3.2, Օդանավակայանի տարածք, Կուլակավանի տարածք, Գոտի 5-ի տարածք (նախկին Գոտի 4.2), Գոտի 4-գերեզմանատան արևմտյան հատված),
- Գոտի 2, Ձորի թաղամասի տարածք (արևմտյան կողմ):

Ընդհանուր առմամբ Փուլ 3-ի ընթացքում կիրականացվեն.

- Գյումրի քաղաքի շուրջ 118կմ երկարությամբ բաշխիչ ցանցերի վերակառուցում/փոխարինում:
- Գյումրի քաղաքում մոտ 6կմ երկարությամբ կոյուղու 250-500մմ տրամագծով խողովակների վերակառուցում:

Նախատեսված է գոտիների սահմանագծերի վերակարգավորում՝

Գոտի 2 – Գոտի 1 սահմանագծերի փոփոխություն՝

Նախատեսվում է Գոտի 1-ը ընդարձակել մինչ Շիրակ-Ջրմուղկոյուղու գրասենյակի մոտակայքում գտնվող 9 հարկանի բազմաբնակարան շենքեր (Գոտի 2-ի հյուսիսային հատված), ինչը թույլ կտա առանց պոմպերի գործարկման ապահովել բավարար ճնշում:

Գոտի 3-ի և Գոտի 2-ի սահմանագծերի փոփոխություն ավելի բարձր ջրապահանջի հետևանքով՝

Հաշվի առնելով ԾԻԳ-ի կողմից պահանջվող բարձր ջրապահանջը, Խորհրդատուն վերանայել է հիդրավիլի մոդելները բարձր ջրապահանջին համապատասխան, համաձայն որի մեծ ջրապահանջը խողովակներում կառաջացնի ավելի բարձր շփման կորուստ, որն էլ Գոտի 2-ում և 3.1-ում կհանգեցնի ավելի ցածր ճնշման: Այդ պատճառով նախատեսվում է, Գոտի 3.1-ի հյուսիսային որոշ հատվածներ մտցնել Գոտի 2-ի մեջ: Դա կպահանջի նվազագույն ծավալով աշխատանքների իրականացում, քանի որ Գյումրիի արևմտյան մասի աշխատանքները ներառված են սույն Փուլ 3-ի շրջանակների մեջ, իսկ արևելյան մասում առաջարկվող նոր սահմանագիծը շատ փոփոխություն արդեն իսկ երկու գիծ ունի:

Նախատեսված է հին բաշխիչ ցանցի շահագործումից դուրս բերում՝

Գոյություն ունեցող ջրամատակարարման բաշխիչ ցանցի խողովակները նախատեսվում է անջատել: Ջրամատակարարման հին ցանցին միացած բոլոր հաճախորդները կտեղափոխվեն նոր ցանց:

Նոր բաշխիչ ցանց տեղափոխվող տների որոշակիացման համար կպահանջվի համալիր գործողությունների իրականացում՝ գրանցումների ուսումնասիրություններ, ստուգայցեր և տեղի ՁԼՄ-ների միջոցով բնակիչների ծանուցում:

Նախատեսված է ջրամատակարարման բաշխիչ ցանցի փոխարինում՝

Ներկայացված են սույն ծրագրի շրջանակներում նախատեսվող աշխատանքների մանրամասներն ըստ քաղաքի ջրամատակարարման 5 գոտիների:

Գոտի 1-Այս գոտու ջրամատակարարումն իրականացվում է Հովունու և Մայիսյան ջրամբարներից: Այն ընդգրկում է Անի, Մուշ թաղամասերը և Մավոյան փողոցի հյուսիսային հատվածը: Այս գոտու ցանցը նախատեսվում է լիովին նորացնել: Բաշխիչ ցանցը կիրականացվի մոտ 33կմ ընդհանուր երկարությամբ de75-de160 տրամագծով պոլիէթիլեն խողովակներով (տնային միացումներ՝ de25-de32 մմ տրամագծի PE խողովակներով և 9կմ երկարությամբ):

Շերամ փողոցի տարածքը ներառված չէ, քանի որ այս տարածքի ջրամատակարարումն իրականացվում է անմիջապես Ղազանչիի մայր ջրատարից և այստեղ որևէ խնդիր արձանագրված չէ:



Այս գոտում նախատեսված հիմնական հողային և ռեկուլտիվացիոն աշխատանքերի ծավալներն են՝ փորում՝ 43913մ³, հետլիցք՝ 26997մ³, հողային ծածկույթի վերականգնում՝ 17808մ³:

Գոտի 2-Այս գոտին ընդգրկում է քաղաքի նոր (Ժամանակակից) տարածքները՝ Սարգսյան, Մանուկյան փողոցները, Տիգրան Մեծի պողոտան, ինչպես նաև երկաթգծի կայարանի արևելյան հատվածը (3.2 գոտու նախկին հյուսիսային հատված) և Բուլվարային թաղամասը: Բաշխիչ ցանցը ծրագրի նախկին փուլերի ընթացքում փոխվել է: Փուլ 3-ի շրջանակներում նախատեսվում է նոր բաշխիչ ցանցի կառուցում գետի արևմտյան, ինչպես նաև երկաթուղու հարակից տարածքներում:

Այդ տարածքներում նախատեսվում է իրականացնել շուրջ 2590 տնային միացումներ՝ իրականացված de75-de225 տրամագծով պոլիէթիլենե խողովակներով, որոնց ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 42կմ (տնային միացումներ՝ de25-de32 մմ տրամագծի PE խողովակներով և 20կմ երկարությամբ):

Այս գոտում նախատեսված հիմնական հողային և ռեկուլտիվացիոն աշխատանքերի ծավալներն են՝ փորում՝ 61336մ³, հետլիցք՝ 37926մ³, հողային ծածկույթի վերականգնում՝ 28200 մ³:

Գոտի 3-Գոտին ընդգրկում է քաղաքի հին տարածքը՝ Գայի փողոցի հյուսային հատվածը, Տերյան փողոցը, ինչպես նաև 3.2 ենթագոտու հարավային հատվածը, որը ներառում է երկաթգծի և օդանավակայանի միջև ընկած տարածքը:

Գոտու ջրամատակարարման իրականացվում է 3ա և 3բ ճնշումային աշտարակներից:

Օդանավակայանի ջրամատակարարման հզորությունն ուժեղացնելու, մասնավորապես հրդեհաշիջման համար և 3.2 ենթագոտու գոյություն ունեցող ցանցը չճանրաբեռնելու նպատակով՝ նախատեսվում է նոր DN225 խողովակով երկաթգծի և օդանավակայանի տարածքները միացնել DN500 ջրատարին:

Այդ տարածքներում նախատեսվում է իրականացնել շուրջ 1249 տնային միացումներ՝ իրականացված de75-de225 տրամագծով պոլիէթիլենե խողովակներով, որոնց ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 33կմ (տնային միացումներ՝ de25-de32մմ տրամագծի PE խողովակներով և 8,5կմ երկարությամբ):

Այս գոտում նախատեսված հիմնական հողային և ռեկուլտիվացիոն աշխատանքերի ծավալներն են՝ փորում՝ 4288 մ³, հետլիցք՝ 26331մ³, հողային ծածկույթի վերականգնում՝ 24923մ³:

Գոտի 4-Գոտին ընդգրկում է քաղաքի հարավային տարածքը: Գոտու ջրամատակարարման իրականացվում է 4ա և 4բ ճնշումային աշտարակներից: Այստեղ ցանցը հիմնականում փոխվել է նախորդ փուլերի ընթացքում: Այս փուլում նախատեսվում է հարավային տարածքի ընդլայնում՝ H-17 ճանապարհի երկայնքով: Այդ նպատակով կկիրառվի ընդամենը 33 մ երկարությամբ de 110 տրամագծով պոլիէթիլեն խողովակ:

Այս գոտում նախատեսված հիմնական հողային և ռեկուլտիվացիոն աշխատանքերի ծավալներն են՝ փորում՝ 32 մ³, հետլիցք՝ 21մ³:

Գոտի 5-Այս գոտին ընդգրկում է Ղարսի խճուղու մի փոքր տարածք: Այս գոտու մատակարարումն իրականացվում է Գոտի 4-ից, իսկ տվյալ գոտում բաշխիչ ցանցը հարկավոր է լիովին նորացնել:

Այդ տարածքներում նախատեսվում է իրականացնել շուրջ 103 տնային միացումներ՝ իրականացված de75-de225 տրամագծով պոլիէթիլենե խողովակներով, որոնց ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 3,5կմ (տնային միացումներ՝ de25-de32մմ տրամագծի PE խողովակներով՝ 80 մ երկարությամբ):

Այս գոտում նախատեսված հիմնական հողային և ռեկուլտիվացիոն աշխատանքերի ծավալներն են՝ փորում՝ 4666 մ³, հետլիցք՝ 2555 մ³, հողային ծածկույթի վերականգնում՝ 2161 մ³:



Հովունի, Մարմաշեն և Մայիսյան ջրամբարների (ՕԿՁ-ների) գոյություն ունեցող ջրատարի կառույցներում փոփոխությունները նույնպես կկատարվեն փուլ 3-ի շրջանակներում: Մասնավորապես.

- Մարմաշեն- մուտքի և ելքի նոր խողովակների տեղադրում, փականային հորի ծածկի սալի վերանորոգում
- Մայիսյան-նոր շրջանցող խողովակ
- Հովունի - նոր շրջանցող խողովակ և փականային հորեր
- 3Ա ջրամբար - մուտքի և ելքի խողովակների տրամագծերի մեծացում
- 3Բ ջրամբար - մուտքի և ելքի խողովակների տրամագծերի մեծացում
- 4Ա ջրամբար - մուտքի և ելքի խողովակների տրամագծերի մեծացում
- 4Բ ջրամբար - մուտքի և ելքի խողովակների տրամագծերի մեծացում:

Այս փոփոխությունները թույլ կտան ջրամբարների աշխատանքը դարձնել ավելի ճկուն, ինչպես նաև վերականգնել մի քանի փական հանգույցներ, որոնք գտնվում են վատ վիճակում:

Կոյուղագծերի փոխարինման համար ընտրված տարածքները, որտեղ դրանք պետք է հրատապ փոխարինել: Այս տարածքները կոյուղագծերի փոխարինման համար եղել են առաջնահերթ՝ կապված փլուզման կամ խոշոր խցանումների հետևանքով առաջացրած շահագործման խնդիրների հետ: Կոյուղագծերի անհապաղ փոխարինում պահանջվող փողոցներն են՝ Շիրակացու փողոց՝ de315, L=1155մ և de 200, L=254մ, Տեքստիլագործների փողոց՝ de200-de315, L=591մ, Մելքոնյան (Պիոներական) փողոց՝ de400, L=235մ, Շիրակացի և Ռուսթավելի փողոցներ՝ de400, L=190մ, Կոմիտերնի փողոց՝ de250, L=460մ, Մուսայելյան փողոց՝ de500, L=733մ, Տերյան փողոց՝ de500, L=785մ, Տիգրանյան փողոց՝ de500, L=350մ, Մսի կոմբինատ՝ de355, L=900մ և de 200, L=143մ, Անի թաղամաս, 7-րդ փողոց՝ de315, L=250մ, Աթոյան-Ղուկասյան փողոց՝ de400, L=420մ, Կոմիտասի 3-րդ փակուղի՝ de200, L=245մ:

Վերոհիշյալ փողոցներում ընդհանուր առմամբ կփոխարինվեն մոտ 6կմ ընդհանուր երկարությամբ կոյուղու խողովակներ՝ 200-500 մմ տրամագծով պոլիվինիլքլորիդե (UPVC) խողովակների իրականացմամբ (որից մոտ 5 կմ՝ de315-de500 տրամագծի խողովակներով):

Այս փողոցները տեղակայված են քաղաքի գոտի 1, 2 և 3-ի տարածքներում, որոնց հողային և ռեկուլտիվացիոն աշխատանքների ծավալները ընդգրկված են վերևում՝ ըստ առանձին գոտիների ներկայացված ծավալներում:

Գյումրի քաղաքի և հարակից գյուղերի մեծամասնության ջրամատակարարումն իրականացվում է հիմնականում 3 կապտածներից (աղբյուր) և Գյումրու հյուսիսում գտնվող արտեզյան ջրհորներից (Ղազանչի 1, 2, Կրասար և Զույգաղբյուր):

Կապտածների ընդհանուր համակցված հզորությունը կազմում է մոտ 1700 լ/վ: Ստորև ներկայացված է յուրաքանչյուր առանձին աղբյուրի հզորությունը՝ Ղազանչի 1՝ 460լ/վ, Ղազանչի 2՝ 420 լ/վ, Զույգաղբյուր՝ 530 լ/վ, Կրասար՝ 285 լ/վ:

Այս աղբյուրների ջուրը 4 ջրատարներով (երեքը սնում են Գյումրիի ջրամատակարարման համակարգը և որոշ գյուղեր, իսկ չորրորդը սնում է միայն գյուղերի ջրամատակարարման համակարգը) հոսում է հարավային ուղղությամբ, Ախուրյանի գետահովիտով ներքև դեպի Գյումրի: Նշված աղբյուրների ջուրը բարձր որակի է, այնուամենայնիվ վերջինիս քլորացումն իրականացվում է Գյումրիից դեպի հյուսիս-արևմուտք գտնվող Կապսի քլորակայանում (Փուլ 1): Ներկայումս քաղաք մուտք գործող ջրատարների ջրերի վարակազերծումը կատարվում է յուրաքանչյուր ջրատարի համար առանձին-առանձին կառուցված քլորակայանների միջոցով:

Քլորացումից հետո ջուրը հոսում է դեպի քաղաքը մատակարարող 3 հիմնական ջրամբարները, կամ գլխավոր ջրատարներով ապահովում Գյումրու արևելյան, արևմտյան և հարավային հարակից գյուղերի ջրամատակարարումը:

Գյումրի քաղաքի արևմուտքում՝ Վարդ-բաղի տարածքում, առկա է նաև մեկ կապտած, որն օգտագործվում է քաղաքի հարավ-արևմտյան մասի փոքր տարածքի (տուսայան զինվորական



գորամասի մոտ) ջրամատակարարման համար: Ըստ 2002թ. իրականացված նախնական ուսումնասիրության արդյունքերի, այս աղբյուրակապի հնարավոր ջրարտադրության հզորությունը կազմում է շուրջ 30 ր/վ:

Գյումրու քաղաքային տարածքն ընդգրկող ջրամատակարարման բաշխիչ համակարգը բաղկացած է հիմնականում պողպատե խողովակներից և մատակարարվում էր 3 հիմնական ջրամբարներից՝ Մարմաշեն՝ 10000իսմ, Մայիսյան՝ 20000իսմ և Հովունի՝ 6000իսմ ծավալով:

Բաշխիչ ցանցի ներկայիս բարձր կորուստների պատճառով պահանջվում է ջրամբարների ամբողջ պաշարը՝ զիջերային ժամերի անհրաժեշտ պաշարի ապահովման համար: Այդ իսկ պատճառով առաջարկվում է ջրամբարների բազմակողմանի ուսումնասիրությունը կատարել բաշխիչ ցանցի աշխատանքների ավարտից հետո և անջատել հին բաշխիչ ցանցը, ինչը կնպաստի կորուստների զգալի կրճատմանը:


2003թ. մշակված գլխավոր հատակագիծը և տեխնիկատնտեսական ուսումնասիրությունները (2003թ.) հանգեցրեցին Գյումրու քաղաքային տարածքի ջրամատակարարման հայեցակարգի հիմնավոր փոփոխությանը: Ըստ նոր հայեցակարգի, որը վերաբերում է ծրագրի բոլոր փուլերին, պետք է ունենալ ճնշումային գոտիներ, որոնցից յուրաքանչյուրի մատակարարումն անհրաժեշտ է իրականացնել գոյություն ունեցող ջրամբարներից՝ ինքնահոս եղանակով, կամ նոր փոքր ջրամբարներից, որոնք ծառայելու են որպես ճնշում իջեցնող ջրավազաններ (ՃԻՋ):

Գլխավոր հատակագծի շրջանակներում առաջարկվում էր իրականացնել վերը նշված կապտածների վերականգման աշխատանքները: Այդ աշխատանքներն ուղղակիորեն իրականացվեցին ջրամատակարար ընկերության կողմից Փուլ 1-ի ընթացքում: Հիմնական ջրարտադրության աղբյուրների վիճակն այժմ համարվում է բավարար և ապագայում բացի տեխնիկական սպասարկման աշխատանքներից, այլ աշխատանքների կարիք չի պահանջվի: Յուրաքանչյուր ճնշումային գոտու մատակարարումն իրականացվում է առանձին սնուցող ջրատարով: Գոտու մի ջրատարը մատակարարվում է Մարմաշենի, իսկ մյուսը՝ Մայիսյանի ջրամբարներից:

Թեև մոտ 1700 ր/վ ջրաքանակն ավելի քան բավարար է Գյումրու և հարակից գյուղերի ջրապահանջն ապահովելու համար, սակայն առկա ջրակորուստների պատճառով այդ ջրաքանակը ներկայումս չի բավարարում: Ընշումային ոչ բոլոր գոտիների տարածքներում է ապահովված շուրջօրյա ջրամատակարարում, քանի որ գոյություն ունեցող բաշխիչ ցանցից ջրի արտահոսքի կորուստները շատ մեծ են: Որոշ վայրերում բարձրահարկ շենքերի վերին հարկերի ջրամատակարարման համար չկա բավարար ճնշում: Թեև բազմաբնակարան շենքերի հարկայնությունը կազմում է հիմնականում 5 հարկ, ջրամատակարարման համար կիրառվում են պոմպեր:

Գյումրին մատակարարող գոյություն ունեցող գլխավոր ջրատարների քանակը և տրամագծերն ընդհանուր առմամբ մեծ չափերի են, հիմնականում ջուրը հոսում է ինքնահոս և ջրատարները լցվում են կիսով չափ: Փուլ 1-ի ընթացքում գլխավոր ջրատարները ևս որաշակիորեն վերականգնվել են: Մասնավորապես Փուլ 1-ի և Փուլ 2-ի (2009-2014թթ) ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Փուլ 1-ի շրջանակներում կառուցվել են նոր ջրամբարներ, որոնք հարկավոր էին 3-րդ և 4-րդ ճնշումային գոտիներում կայուն ճնշում ապահովելու համար: Բացի այդ կառուցվել են նաև նոր սնուցող ջրատարներ՝ ՃԻՋ-ներից դեպի համապատասխան 3.1 և 4-րդ ճնշումային Գոտիներ, իսկ Մայիսյանի գոյություն ունեցող սնուցող ջրատարն օգտագործվել է 3.2 ճնշումային Գոտու հարավ-արևելյան մասի սնուցման նպատակով: Փուլ 1-ը ներառել է նաև 3.1, 3.2 և 4-րդ Գոտիների տարածքների բաշխիչ ցանցերի փոխման աշխատանքներ: Ներկայումս 3.1 և 4-րդ գոտիների բոլոր տարածքներում առկա է 24 ժամյա ջրամատակարարում: Նոր ՃԻՋ-ների (3ա, 3բ, 4ա, 4բ) մոտ տեղադրված են 200 մմ տրամագծով մուտքի և էլքային խողովակներ, որոնք սակայն



ունենալով փոքր տրամաչափեր, սահմանափակում են ջրի հոսքը բարձր պահանջարկի ընթացքում: Այս պատճառով ներկայումս ջրամաբարները չեն սպասարկվում ջրային ընկերության կողմից:

Փուլ 2-ի ջրջանակներում 2-րդ Ճնշումային Գոտու համար ստեղծվեց նոր սնուցման համակարգ, որը մատակարարվում էր 2 ջրամբարներից՝ Մայիսյան և Մարմաշեն: Քանի որ Մարմաշենի ջրամբարի նիշը (1610 մ) ավելի ցածր է, քան Մայիսյանինը (1653 մ), ապա վերջինիս ճնշումը պետք է իջեցվի ճնշման կարգավորիչ փականով: Փուլ 2-ի ընթացքում նոր 2-րդ Ճնշումային Գոտու բաշխիչ համակարգի մոտ կեսը փոխվել է:

Գյումրի քաղաքի ջրահեռացման համակարգի անմխիթար վիճակի պատճառով և նրանցում հաճախակի են խցանումներ տեղի ունենում, ինչի արդյունքում չմաքրված կեղտաջրերը լցվում են քաղաքի տարածքով հոսող գետակներ:

Հիմնվելով տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների ընթացքում կատարված հետազոտությունների վրա, Գյումրու կոյուղու համակարգը նախատեսված է միայն կեղտաջրերի համար: Գոյություն ունի մակերևութային ջրերի ջրահեռացման առանձին համակարգ, ինչպես նաև քարե ջրթող խողովակների «Քարես» կոչվող հին համակարգ, որը կառուցվել է որպես հին ջրամատակարարման համակարգի մի մաս՝ գրունտային ջրերի հավաքման համար: Կոյուղու այդ համակարգի գծագրեր գոյություն չունեն: Բոլոր կոլեկտորները գրավիտացիոն են և հիմնականում հոսելով հյուսիսից դեպի հարավ թափվում են քաղաքի մեջ:

Կոյուղու համակարգի հիմնական կառուցվածքը հետևյալն է.

- Գյումրի Չայ գետը, որն ամբողջապես ծածկված է Ռուսթավելի և Տերյան փողոցների արանքում, հավաքում է գետի և երկաթգծի միջև ընկած քաղաքի կենտրոնական մասի կոյուղին,
- Արևմտյան Գյումրի Չայ կոլեկտորը գալիս է Անիից՝ գետին զուգահեռ և հավաքում է գետից արևմուտք ընկած տարածքների կոյուղին,
- Շերամ և Մուշ թաղամասերի կոյուղին հավաքվում է արևմտյան կոլեկտորի միջոցով, որը ԿՄԿ-ից 1 կմ հոսանքն ի վեր միանում է արևմտյան Գյումրի Չային,
- Արևելյան կոլեկտորը, որը հավաքում է երկաթգծից արևելք ընկած տարածքների կոյուղին, ամբողջովին չի կառուցվել և կոյուղին թափվում է Ղորղորա գետը:

Սակայն տարիների ընթացքում թերի տեխսպասարկման հետևանքով կոյուղու խողովակները խցանվել կամ վնասվել են: Կատարվել են բազմաթիվ նորոգումներ հաշվի չառնելով նույն տրամագծի խողովակով շարունակելու հանգամանքը, ինչը հանգեցրել է հետագա խցանումների: Գոյություն ունեն նաև բազմաթիվ փոխկապակցումներ մակերևութային ջրերի և կոյուղու համակարգերի միջև, որոնք իրականացվել են խցանումների պատճառով առաջացած հեղեղումները նվազեցնելու նպատակով, և ոչ ճիշտ միացումներ մակերևութային ջրահեռացման համակարգին:

Գյումրու կոյուղու համակարգը լավ կազմակերպված չէ և ընդհանուր առմամբ այն չի սպասարկվում՝ բացառությամբ խցանումների առաջացման դեպքում հրատապ նորոգումներից: Ցանցի վերաբերյալ տվյալները շատ քիչ են, իսկ համակարգը վատ վիճակում է:

Հարկ է նշել, որ տեղանքի ռեյինֆային պայմանները թույլ են տալիս իրականացնել կեղտաջրերի ինքնահոս հեռացում:

1988թ. երկրաշարժից հետո, երբ քաղաքի հյուսիսային մասում սկսվեց Նոր Մարմաշեն բնակելի թաղամասի կառուցապատման աշխատանքները, զուգահեռաբար խողովակները նաև թաղամասի կոյուղացումը և կեղտաջրերի հեռացումը դեպի կոյուղու մաքրման կայան՝ երեք գլխավոր կոյուղագծերով՝ 1000-1200 և 600մ տրամագծերով:

Գյումրու հարավում գտնվող 60.0հազ. մ³/օր հզորությամբ կեղտաջրերի կենսաբանական մաքրման կայանը 1997թ.-ից ի վեր չի գործում: Նախկինում կայանն արտադրում էր առաջացած կեղտաջրերի քանակի մոտ 50%-ի մաքրումը՝ ըստ իր հզորության:



Սույն ծրագրի շրջանակներում կոյուղու համար հատկացված միջոցները նախատեսված է օգտագործել միայն նախկին «Շիրակ ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից որոշակիացված կոյուղու ամենախնդրահարույց հատվածների փոխարինման համար:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվող բացասական բնապահպանական ազդեցությունները հետևյալներն են.

- աղմուկ, փոշի, շահագործվող շինարարական մեքենաներից արտանետումներ,
- ճանապարհների լրացուցիչ ծանրաբեռնվածություն՝ պայմանավորված շինարության ժամանակ տրանսպորտային միջոցների կիրառմամբ,
- շինարարական տարածքներում հողի տեղայնացված էրոզիա,
- շրջակա միջավայրի և ջրային ռեսուրսների աղտոտում շինարարական և կենցաղային աղբով:

Ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքները նկատելի դրական ազդեցություն կունենան բնակչության սոցիալական վիճակի վրա: Արդյունքում կբարելավվի Շիրակի մարզի Գյումրի քաղաքի բնակչության կյանքի որակը՝ խթան հանդիսանալով տեղի բնակչության սոցիալական-տնտեսական պայմանների բարելավման համար:

Հնարավոր բոլոր բացասական ազդեցությունները կնվազեցվեն (կմեղմացվեն) բնապահպանական կառավարման պլանում (ՇՄԿՊ) ներառված մեղմացնող միջոցառումների իրականացման և վերահսկման արդյունքում:

Վերականգնման աշխատանքների իրականացման արդյունքում ակնկալվում են հետևյալ դրական ազդեցությունները.

- ջրային ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործում,
- բնակիչների կենսամակարդակի բարելավում՝ պայմանավորված շուրջօրյա ջրամատակարարման ապահովմամբ,
- խմելու ջրի բարձր որակի ապահովում, ջրակորուստների կրճատում, ջրամատակարարման տնողության ավելացում, ջրային ռեսուրսների պահպանություն և կառավարում,
- խմելու ջրի աղտոտման վտանգի նվազում և վարակիչ հիվանդությունների ներթափանցման կանխում/բացառում,
- առողջական պայմանների բարելավում,
- ջրի հաշվառման համակարգի ներդրում և սպառման արդյունավետության բարձրացում:

Շինարարության ընթացքում նախատեսված են բավարար միջոցառումներ նվազագույնի հասցնելու թափոնների կառավարման հետ կապված բնապահպանական ռիսկերը:

Ծրագրի շրջանակներում նախատեսված շինարարական աշխատանքների ժամանակ շինաղբը և ավելորդ բնահողը նախատեսված է տեղափոխել Գյումրու քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր, իսկ որոշ հատվածներում դրանք կհարթեցվեն տեղում:

Շինարարական նյութերի մատակարարումը մինչև շինարարական հրապարակներ նախատեսված է իրականացնել ավտոմոբիլային տրանսպորտով, որոնք շին. հրապարակներ կհասցվեն քաղաքային ու դաշտային գրունտային ճանապարհներով՝ չխախտելով ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության պահանջները:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Այսպիսով գործունեության իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է: Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը:



Փորձաքննական պահանջներ

1. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ:

2. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների (ջրերի որակի, քանակի, վիճակի, օդ, հող և այլն) և շահագործման ռեժիմի մոնիթորինգ, կազմել հետևախազժային վերլուծության ծրագիր, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմիններին և հասարակայնությանը: Անհրաժեշտության դեպքում նախատեսել շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանն ու բացառմանն ուղղված լրացուցիչ միջոցառումներ:

3. Առաջացած շինադրի (կենցաղային ադրի) հեռացումը, ինչպես նաև ջրօգտագործումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

<<Հայցյուղշիննախագիծ ինստիտուտ>> ՍՊԸ կողմից ներկայացված <<Շիրակ-Ջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ



Զ. Զուռնայան